ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» ---------- 2017թ. **N------ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ.648-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Փ.Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող վարչական շենքից «Հայրենական ապրանքարտադրողների միավորում» հասարակական կազմակերպությանը տրամադրված 53.5քմ և 89.3քմ մակերեսներով տարածքների անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել մինչև 2020 թվականի հոկտեմբերի 30-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Փ. Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող վարչական շենքից «Հայրենական ապրանքարտադրողների միավորում» հասարակական կազմակերպությանը տրամադրված 53.5քմ և 89.3 քմ մակերեսներով տարածքների անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել մինչև 2020 թվականի հոկտեմբերի 30-ը:

Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.02082016-01-0176 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի հ. 24-ի հ.187-Ա որոշման հիման վրա քննարկվող տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով 3 տարի ժամկետով տրամադրվել էր նշված կազմակերպությանը և վերջինիս հետ կնքվել է գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, որի հիման վրա միության իրավունքը ստացել է պետական գրանցում /հիմք՝ անշարժ գույքի օգտագործման հ.04082014-01-0074 վկայական/:

Հայրենական ապրանքարտադրողների միությունը հիմնադրվել է 1999 թվականին: Միավորման հիմնական նպատակն է օրենքով սահմանված կարգով նպաստել հայրենական ապրանքարտադրողների գործունեության կոորդինացմանն ու ջանքերի համախմբմանը՝ բոլոր ուժերն ուղղելով ՀՀ արդյունաբերության, գյուղատնտեսության ու սպասարկումների ոլորտների վերակենդանացմանն ու հետագա զարգացմանը, այդ ոլորտների համակողմանի պաշտպանությանը, նոր տնտեսական ծրագրերի ու լուծումների մշակմանը, նպաստել հայրենական ապրանքարտադրության զարգացման նախապատվելի ուղղությունների համակարգի ստեղծմանը, սերտ կապեր հաստատել միջազգային համանման հասարակական կառույցների հետ:

Հաշվի առնելով կազմակերպության կողմից իրականացվող գործունեության կարևորությունը, ինչպես նաև համանման դեպքերում հասարակական կազմակերպությունների և միավորումների մասով ձևավորված մոտեցումը, նպատակահարմար է գտնվել վերոնշյալ տարածքների նկատմամբ երկարացնելու կազմակերպության անհատույց օգտագործման իրավունքի ժամկետը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ